ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 21 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Մարետա Առաքելյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Մարետա Առաքելյանը 29.02.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված նորմերի՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ եւ կիրառմամբ, ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ եւ 61-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավական նորմերը չեն համապատասխանում սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման եւ պաշտպանության սահմանադրական մոտեցումներին:

Դիմողի կարծիքով՝ արտադատական կարգով գրավադրված գույքի իրացման դեպքում նախատեսված է սեփականատիրոջ կամքին հակառակ առանց դատարանի որոշման գրավառուի կողմից սեփականության բռնագանձում, որը ենթադրում է սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքից զրկում:

Ըստ դիմողի՝ սեփականության իրավունքից զրկումը պետք է իրականացվի դատարանի միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Մինչդեռ անձի սեփականության նկատմամբ գրավառու բանկի հավակնությունը ներկայումս ձեւավորված դատաիրավակիրառ պրակտիկայում լուծվում է գրավառու բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող բռնագանձման գործընթացի համատեքստում, նրանց հայեցողությամբ եւ հանգեցնում է սեփականությունից զրկելու կամայականությունների եւ ապօրինությունների:

Դիմողը գտնում է, որ բանկը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմերը, արտադատական կարգով բռնագանձել է իր գույքը՝ խախտելով իր սեփականության իրավունքը: Բանկը չի ծանուցել իր գրավի առարկայի բռնագանձման մասին, չի ուղարկել բռնագանձման ծանուցագրեր՝ դրանով իսկ զրկելով իրեն, որպես տան համասեփականատեր, գույքի բռնագանձման օրինականությունը վիճարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում ինքը փաստացիորեն զրկվել է սեփականության իրավունքի դատական պաշտպանության իրավունքից:

Միաժամանակ, դիմողը ներկայացրել է միջնորդություն պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա չեն Մարետա Առաքելյանի դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Մարետա Առաքելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Մարետա Առաքելյանին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

21 մարտի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-7